

Համես Ա. Գևորգյան
«ՀԱՍ ակադեմիկոս

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱ

Հայաստանի դատմությունը և հայկական մշակույթը ժամանակակից
դատմագիտական և բաղադրիչական ժեսությունների լույսի տակ

1. Ամբողջ 19-րդ դարում և մինչև 20-րդ դարի սկիզբը Հայաստանը, հայկական մշակույթը և պատմությունը ծանոթ էին Եվրոպային ու Եվրոպացիներին, և դա պայմանավորված էր ոչ միայն քաղաքական դրդապատճառներով՝ Եվրոպական երկրների արտաքին քաղաքականության և դիվանագիտության ուշադրության փոխադրումով դեպի արևելյան Եվրոպա և Մերձավոր Արևելք: Հայաստանի, հայկական մշակույթի և պատմության հետ Եվրոպական հասարակայնության ծանոթությանը նպաստեցին, առաջին հերթին, Եվրոպական (գերմանական, ապա ֆրանսիական) նոր դասական բանասիրության ականավոր ներկայացուցիչները, որոնց աշխատություններով սկզբնավորվեցին ընդհանուր լեզվաբանությունը և պատմահամեմատական լեզվաբանությունը. դրանց գաղափարներն ու ազդեցությունը վճռորոշ եղան հումանիտար գիտելիքների ամբողջ բնագավառի, առաջին հերթին՝ պատմական գիտության համար: Պատմահամեմատական մեթոդը որդեգրեցին նաև այդ ժամանակ որպես ինքնուրույն գիտակարգեր (դիսցիլիններ) ձևավորվող հնագիտությունը, ազգագրությունը, աղբյուրագիտությունը, արևելագիտությունը, գրականագիտությունը, տցիոլոգիան:

Հայաստանը, հայկական մշակույթը և պատմությունը անմիջապես հայտնվեցին նոր դասական պատմաբանասիրության, նրա կազմում ձևավորված հնույթագիտական լեզվաբանության և մյուս հումանիտար գիտակարգերի հետաքրքրությունների շրջանակում¹, և նրանց ուշադրությունը երիցս հասուցվեց. նրանց հայտնվեց մի հարուստ մշակույթ՝ վկայված պատմական հուշարձաններով՝ հնագույն ժամանակներից մինչև արդիականություն, պատմական փուլերի

¹ «Հատկանշական է, որ պատմահամեմատական լեզվաբանությանը սկիզբ դրած հենց առաջին աշխատությունները անմիջականորեն դիմում էին հայերենին: «Սանսկրիտի, գենդերենի, հայերենի, լատիներենի, լիտվերենի, հին պավուներենի, գորերենի և գերմաներենի համեմատական թերականություն»: այսպես է վերևագրված Ֆրանց Բոպի (F.Bopp) աշխատությունը, որն առաջին անգամ հրատարակվել է 1832-ին (ուսւ. Քարգմ., հատվածաբար, տե՛ս Բ.Ա. Հեղինեց. Իстория языкоизнания XIX-XX вв. Часть 1, М.: Учпедгиз, 1960, с. 30-35).

ու ժամանակաշրջանների հաջորդականության մեջ իր ընդհանրական բնութագծերով և յուրաքանչյուր դեպքում՝ իր ուրույն դրսերումներով:

Այս բոլոր առումներով բացառիկ է հայերենը հնդեվրոպական լեզուների շարքում: Ավելին, հայերենի հետազոտությունը հնարավորություն ընձեռեց պատկերացում կազմելու նաև այլ ժողովուրդների ու տարրեր մշակույթների մասին, որոնց հետ առնչվել, հարաբերվել է հայ ժողովուրդը հազարամյակների ընթացքում: Դրանց թվում կան նաև պատմական ասպարեզից հեռացած ցեղեր ու ժողովուրդներ, որոնց այսպես կոչված «մեռած լեզուների» և ընդհանրապես մշակույթների պատմական վերակազմությունը կամ՝ ամրողության նտակառուցումը, մեծապես հնարավոր դարձավ հայոց լեզվի և հայկական մշակույթի մեջ պահպանված վկայությունների, դրանց հետ համեմատական քննության շնորհիվ: Կարելի է հայացիկ կերպով հիշատակել և այլ օրինակներ. հայերենն է ոչ միայն բուն Հայաստանի, Հայկական բարձրավաճառակի, այլև նրան հարող մի հսկայածավալ տարածաշրջանի աշխարհագրական անունների՝ տեղանունների, պատմական անցքերի ու անձերի հետ կապված իրադարձությունների տեղորշման, դրանց ստուգաբանության, համեմատական քննության հիմնական աղբյուրը հնագույն և հին պատմության համար: Իսկ հայկական գրավոր մշակույթը, իր ստեղծման պահից ի վեր, եղավ նշանակալից երևույթ ամբողջ քաղաքակիրք աշխարհի համար, որին նա ներկայացավ ժամանակի գիտակրթական գրականության բոլոր ճյուղերին վերաբերող երկերով, ընդ որում՝ և՝ ինքնուրույն գործերով, և՝ մեծ թվով նեկանդական գրականությամբ: Անփոխարինելի նշանակություն ունեցավ հայերեն բարգմանական գրականությունը: Հին հոնական դասական գրականության և հելլենիստական շրջանի երկերի, վաղ քրիստոնեության ժամանակաշրջանի, եկեղեցու հայրերի աշխատությունների բարգմանությունները և հենց Աստվածաշնչի հնագույն (գրաբար) բարգմանությունը, պատմահամեմատական մեթոդի տեսակետից, բնօրինակներին համարժեք նշանակություն ձեռք բերեցին, այդպիսին էր նաև քրիստոնեական դավանարանության և կրոնափիլիսոփայության համար էական՝ Արեւապագիտյան գրվածքների հնագույն բարգմանությունը, մի շարք աշխատություններ, որոնք պահպանվել են միայն հայերեն բարգմանությամբ:

Իհարկե, մշակութային այս ամբողջ հարստությունը եվրոպական գիտական հասարակայնությանը ներկայացավ ոչ միանգամից և ամբողջությամբ: Սկսելով հայերենի՝ որպես հնդեվրոպական լեզվի մի ինքնուրույն ճյուղի, լեզվաբանական-քերականական «սովորական» համեմատական քննությունից՝ եվրոպական հետազոտողներն այնուհետև ի հայտ բերեցին հայկական հազար իինգիարյուրամյա պատմագրության նշանակալի երկերը և, առհասարակ, ժամանակի գիտակրթական գրականության բոլոր ճյուղերին վերաբերող գործեր՝ աստվածաբանություն, փիլիսոփայություն, տրամարանություն, մաքենատիկա, տիեզերագիտություն և տոռմար, աշխարհագրություն, բժշկագիտություն և այլն: Եվրոպական նոր դասական հայագիտությունը շուրջ երկարյա ժամանակում մի մեծ ճանապարհ անցավ՝ մշակույթի հուշարձանների նկատմամբ թերահավատությունից ու դրանց թերագնահատումից մինչև գիտական խիստ փորձություն անցած այսօրվա համոզմունքը դրանց արժանահավատության և պատմամշակութային մեծ արժեքի նկատմամբ:

Հայկական մշակույթի գրավոր հուշարձանների գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն թարգմանությունները, դրանց համահավաք տեքստերի կազմումը, մեկնաբանությունները, ստուգաբանական և աղբյուրագիտական վերլուծությունները այդ ժամանակից սկսած կազմեցին և հիմա էլ շարունակում են մնալ, իր իսկ եվրոպական պատմաբանասիրության հական բաղադրամասը։ Այն ներկայացնում են նշանավոր անուններ՝ Կ.Նոյման, Մ.Բրոսսե, Է.Դյուլորիեն, Հ.Հյուրշման, Ֆ.Կոնիբեր, Կ.Կրումբախեր, Ա.Գուտշմիդ, Պ. դե Լազարդ, Վ.Լանգլուա, Հ.Գելցեր, Յ.Մարկվարտ, Ա.Մեյն, Ռ.Թոնսոն և ուրիշներ, որոնց պետք է ավելացվեն նաև Հ.Տաշյանի, Ն.Աղոնցի, Հ.Մանանյանի, Ս.Մալխասյանի, Մ.Արենյանի և ուրիշների անունները։ Այսօր էլ իրեն հարգող ոչ մի լեզվաբան, պատմաբան, մշակութաբան չի շրջանցում ու չի կարող շրջանցել այդ սկզբնաղյուրները, դրանց թարգմանությունները, դրանց մեկնաբանությունները, ծանոթագրությունները, ստուգաբանությունները, ազգային մշակույթի գործառույթի՝ դրանց մեջ ամփոփված պատմական փորձը (experience), ճամանավանդ երբ նա շարադրում է բաղաքակրթությունների պատմություն, եվրոպական կամ ընդհանրապես արևմտյան բաղաքակրթության պատմությունը, կրոնի ու եկեղեցու պատմությունը, երբ նա գրում է անցյալի մեծ մշակույթների՝ մերձավորարևելյան, հունա-հռոմեական, հելլենիստական, վաղ քրիստոնեական, բյուզանդական, Վերածննդի, միջնադարյան մշակույթ-բաղաքակրթությունների և դրանց փոխհարաբերությունների («հանդիպման» - encounters) մասին, նոր, Արևմտյան բաղաքակրթության կազմավորման, նոր մտավոր մշակույթի, ժամանակակից իմաստով՝ գիտության ձևավորման ու զարգացման մասին և այլն։

Անշուշտ, մշակութային ժառանգության խնդիրները և դրանց շուրջը ծավալվող թմբակումները իրենց բնույթով անխուսափելիորեն էզրուերիկ են. դրանք պահանջում են մասնագիտական պատրաստություն և իմացություն, ուրեմն և մատչելի են ներ շրջանակների համար։ Սակայն դրանց արդյունքները ձեռք են բերում մեծ նշանակություն ազգային մշակույթի արժևորման և ազգային ինքնության գիտակցության բյուրեղացման համար և ստանում են հասարակական հնչեղություն՝ այդ մշակույթի կրող ժողովրդի նկատմամբ համապատասխան վերաբերմունքի ձևավորման համար։ Այդպես եղավ 19-րդ դարի ընթացքում և 20-րդի սկզբին, երբ Եվրոպայի և Ռուսաստանի մտավորականությունը և ամբողջ հասարակական կարծիքը գնահատում էին «հայերի բաղաքակրթից դերը Թուրքիայի ասիական խավար միջավայրում», սատարում էին հայ ազգային-ազատագրական շարժումը՝ նշավակելով Օսմանյան կայսրությանը և «հեղափոխական» Թուրքիային՝ մի, ինչպես ասում էին, բաղաքակրթ ժողովրդի², մի հին, պարսմական ազգինախաճիրի³ համար։

Եվրոպական երկրների, առհասարակ Արևմտութիւն բաղաքական կողմնորոշումների փոփոխությունը, առանձնապես վերջին մեկուկես-երկու տասնամյակներում, բացասական ազդեցություն ունեցավ այդ երկրների ժողովուրդների և, առհասարակ, միջազգային հանրության վրա՝ փոխելով նրանց արժեքային կողմ-

² Տե՛ս, օրինակ, Ն.Մար, «Հայկական մշակույթը, Երևան, «Հայաստան» (Վերատպություն), 1989, էջ 28:

³ A.J.Toynebee. Armenian Atrocities: A Murder of a Nation. London-New York-Toronto, MCMXV (1915).

նորոշումները, դուրս մղելով հասարակական գիտակցության և հասարակական հոգեբանության քաղաքակրթական-մշակութային բաղադրիչը:

Այսուհետերձ, կրկնում եմ, քաղաքական ներգործություններից ազատ մտավորական գիտնականը, իր գործի մղումով, որոնելու, գտնելու և նշելու է հայկական մշակույթի տեղն ու գործառույթը մշակույթ-քաղաքակրթությունների պատմական ու ներկայիս երկխոսությունների մեջ, - և դա՝ որքան էլ ջանքեր գործադրվեն ու ծախսեր արվեն աշխարհի քարտեզներից Հայաստան անունը ջնշելու և աշխարհ մտնող նոր սերնդի հասարակական գիտակցության մեջ քաղաքակրթական-մշակութային պատմական հիշողությունը վերացնելու համար:

2. Հայաստանի հին ու նոր պատմությունը, հայկական մշակույթն ու նրա պատմությունը «օրյեկտիվորեն շարադրելու» խնդիրը, սակայն, այնպես պարզունակ չէ, ինչպես այդ կարող է ներկայանալ առօրեական մտածողության տեսանկյունից: Այդ խնդիրը կարող է կատարվել՝ միայն նկատի ունենալով ժամանակակից, գիտական, իմա՝ արևմտյան, պատմագիտական, պատմափիլիսոփայական և մշակութաբանական տեսությունները, հաշվի առնելով դրանց հիմքում ընկած ըմբռնումներն ու հասկացութային համակարգը:

Ստորև ես կշարադրեմ, իմ մեկնարանությամբ, այս հատկանիշները, որոնցով եվրոպական հասարակագիտական-քաղաքագիտական տեսությունը բնութագրում է ազգ - պետություն փոխարարելությունը:

(ա) Նկատի ունենալով **եվրոպական ազգերի պատմական կազմավորման** առանձնահատկությունները՝ այս տեսությունը ազգի ձևավորումը կապում է պետության հետ: Ավելի ճիշտ կլիմեր ասել, որ արևմտյան նոր քաղաքակրթության կազմավորման ընթացքի հետ կազմավորվում են, եվրոպական չափանիշներով, նոր տիպի պետություններ (որոնք քաղաքակրթական բոլորովին այլ ֆունկցիաներ են կատարում, քան անտիկ շրջանի պետությունները, արևելյան պետությունները, Արարական խալիֆաթի կամ Օսմանյան կայսրության նման պետությունները և այլն) և դրանց հետ միասին ձևավորվում են եվրոպական նոր ազգերը:

Տիպական օրինակը, որ լուսաբանման համար բերում են պատմաբան Թոյնբին, մշակութաբան Կյոյրերը, քաղաքագետ Շորսբաումը և ուրիշներ, ֆրանսիական ազգի ձևավորումն է: Ընդ որում՝ խոսք ոչ թե մեկ պետության սահմաններում նույն ժողովորդի տեղային հատվածների, բարբառային-ազգագրական խմբերի պատմական միավորման (ինտեգրացման) մասին է միայն, այլ նաև այդ պետության տարածքում հայտնված միջանցից տարբեր, ուրիշ երնիկական ու լեզվական խմբերի: Եվ այս երնիկական-լեզվական բազմազանությունը այդ երկիր պատմության մեջ իրեն զգացնել է տվել շատ երկար ժամանակ: Ու չնայած դրան, դարերի պատմությունը հանգեցրել է նրան, որ երնիկական-լեզվական այս խճանկարը կազմել է ֆրանսիական ազգային մշակույթի ամբողջականության (wholeness) հարստությունը:

(բ) Երկրորդ հանգամանքն էլ հենց վերաբերում է **ազգային մշակույթի** հետ պետության առնչություններին: Պետական կազմավորումների սահմաններում եվրոպական ազգերի ձևավորման այս նկարագրությունը, ինչպես ասացի, ընդ - հանուր առմամբ էապես տարբերվում է հատկապես արևելյան բռնապետական կայսրություններին հատուկ՝ այլ ժողովուրդների, երնիկական ու լեզվական խմբերի բռնի ուժացման, հավատափոխման և ֆիզիկական բնաջնջման դեպքե -

րից: Մինչդեռ այս դեպքում, երբ եվրոպական հասարակագետները և քաղաքա - գետները ազգի գաղափարը կապում են պետության հետ, ապա նրանք նկատի ունեն, որ մեկ պետության տարածքում հայտնված էրնիկական-լեզվական խմբերի համար աստիճանաբար ծևավորվում են ընդհանուր ազգային լեզու և ազգային մշակույթ, այսինքն՝ տվյալ պետության սահմաններում անցում է կատարվում լեզվական-քարբառային բազմազանությունից դեպի ազգային լեզու և բազմազան էրնիկական (այսպես ասած՝ ազգագրական մշակույթներից) դեպի ազգային մշակույթ: Այս անցումը բնական է և պարզապես անխուսափելի այնքանով, որքանով համապատասխանում է ժողովրդի հոգևոր ու նյութական կյանքի կազմակերպման համընդհանրական ձևերի առաջացմանը և գործառնությանը: Գոյանում է մշակույթի մի նոր (ազգագրական մշակույթների վրա բարձրացող և ընդհանրական) շերտ, որը ես պայմանականորեն անվանել եմ մշակույթի քաղաքակրթական ձևերի շերտ:

Այս թեգերը պմիելով հանդերձ հարկավոր է նկատի ունենալ, որ ազգակերտման և ազգային մշակույթ ստեղծելու ուղղակի առաքելություն պետությունը չունի: Պետության իրավասությունը տարածվում է որոշակի տարածքի բնակչությունում և պետության անմիջական առաքելությունը եվրոպական իրավաբաղադրական մոդի ներկայացուցիչները (Մաքիավելիից, Գրոցիոսից, Շրուֆից, Ռուստոյից, Շեգելից մինչև Դյուգի և Կելգեն) համարում են հասարակական կյանքի կառավարումը, նրա տնտեսական և սոցիալական կառուցվածքի պահպանումը: Որքան էլ այս առաքելության վերագրումը պետությանը լինի իդեալականացված, այսուհանդերձ այն արտահայտում է եվրոպական կյանքի զարգացման ընթանուր միտումը: Բայց պետությունը, եվրոպական հասարակության զարգացման ընթացքում կատարելով իր այդ հիմնական առաքելությունը, դրանով իսկ պայմաններ և միջավայր էր ստեղծում համընդհանուր ազգային լեզվի և ազգային մշակույթի կազմակերպման համար: Ես, իրենց հերթին, ազգային լեզուն և մշակույթը կյանքի են կոչվում, որպեսզի ծառայեն և սպասարկեն հասարակական կյանքի իրավական-քաղաքական կազմակերպման, հասարակական ամբողջ կենսագործունեության ձևերին և կառուցվածքներին, ընդհանուր հոգևոր կարիքներին:

(գ) Սրան ավելանում է երրորդ հատկանիշը, որի մասին խոսք եղավ վերը, այն է՝ ժողովրդի կյանքի կազմակերպման ու կարգավորման իրավական եղանակը: Որևէ ժողովրդի ավանդական գոյությանը և էրնիկական մշակույթին հատուկ է մարդկանց հարաբերությունների կարգավորումը բարոյական ու սովորությային նորմատիվ միջոցներով, մինչդեռ ժողովրդին ազգ է դարձնում այն հանգամանքը, որ դրանց փոխարինելու են գալիս իրավական նորմերը, հանրային կյանքի կազմակերպման ու կարգավորման իրավաբաղադրական եղանակը, այսինքն՝ այստեղ ևս էրնիկական և ազգագրական խմբերին հատուկ բազմազանությունից անցում է կատարվում դեպի հանրային կյանքի կազմակերպման ու կարգավորման իրավաբաղադրական եղանակը:

Եվ այսպես, որևէ ժողովրդի պատմական զարգացման մի փուլում, որոշակի պայմանների առկայության դեպքում, էրնիկական-ազգագրական մշակույթի բազմազանության վրա բարձրանում է մշակույթի այսպես ասած քաղաքակրթական՝ արդեն ընդհանրական շերտը, որը կազմում են գրական լեզուն, գիրն ու գրչությունը, գիտությունը, կրթական համակարգը, շինարարական արվեստն ու ճարտարապետությունը, տնտեսվարման եղանակը, ընդհուպ մինչև հասարակա-

կան կյանքի կազմակերպման իրավաքաղաքական ձևերը։ Պարտադիր չէ, որ դրանք բոլորը միաժամանակ հանդես գան, դրանց ձևավորումը կարող է պատմական մի ամբողջ ժամանակաշրջան ընթանալ, բայց կարևոր է, որ ժողովուրդը մուտք է գործում այդ պատմական ժամանակաշրջանը՝ էթնիկական-ազգագրական բազմազանությունից անցում կատարելով դեպի ընդհանրություն և մի նոր որակ, որ ազգ է կոչվում։

Սա այնքան կարևոր է հայ ժողովրդի՝ որպես ազգ ներկայանալու իրավունքի, որոշակի տարածքում՝ պատմական Հայաստանում իր ստեղծած մշակույթի ժառանգորդը լինելու իրավունքի հաստատման համար։ Չե՞ որ այդ իրավունքը ուղղակիորեն վիճարկվում է արևմտյան, հատկապես 1990-ական թթ., քաղաքական պատմագրության մեջ։

Ահա ժամանակակից անզիացի երկու հեղինակավոր մասնագետների կարծիքները։ Էռնեստ Գելմերը գտնում է, որ «ազգերը և պետությունները առաջացել են միմյանցից անկախ»։ «պետությունը անկասկած առաջացել է ազգից անկախ» (իսկապես, ինչպես մենք հենց նոր տեսանք, պետության առաջնային կոչումը ազգակերտումը չէ) և «որոշ ազգեր անկասկած առաջացել են առանց իրենց սեփական պետության բարենարրության», սակայն Գելմերը նաև վերապահություն է անում, որ ազգի ժամանակակից (իմա՝ եվրոպական) ըմբռնումը թերևս ավելի ենթադրում է նախապես («ապրիորի կերպով», ասում է նա) պետության գոյությունը⁴։ Մինչընդունակ Էրիկ Հորսբարումը (թեպետև վկայակոչում է Գելմերին որպես հեղինակության, բայց նրանից իմ թերած հատվածները չի մեջքերում, ինչպես նաև հաշվի չի առնում նրա տված սահմանումների նրբությունները) ուղղակի գրում է, թե իսնդիք վերլուծությունը պահանջում է ընդունել անվերապահորեն, որ «ազգայնականությունը նախորդում է ազգերին։ Ազգերը չեն, որ ստեղծում են պետություններ և ազգայնականություններ, այլ՝ ծիշտ հակառակը»⁵։ Եվ այս տեսակի խիստ բնական է, որ Հորսբարումը, առանց պատմական և այլ մանրամասների մեջ մտնելու, հայերի (ինչպես որ սերբերի, խորվաթների) և նրանց անկախական շարժման մասին ասում է, որ այդ շարժումը հայ ազգայնական վերնախավն էր դրուել, իսկ ըստ Էռիթյան հայերը չպետք է հավակնեին անկախ պետականության իրենց պատմական որոշակի տարածքի վրա, քանի որ «նրանց վերջին փոքրիշատե կարևոր քագավորությունը կարելի է գտնել ոչ ավելի ոչ, քան Ա.Ք. առաջին դարում» և «դրու է գտնվում նրանց ներկա (իրական - real) պատ-

⁴ Ste'v E.Gellner. *Nations and Nationalism*. Oxford, 1983, գլուխ առաջին։ Բայց՝ ըմբռնումնով մտտեսակ ազգայնականության ժամանակակից ընսալատներին։ իրողություն է, որ XIX-XX դդ. ասպարեզ են եկել ժողովուրդներ, որոնք նախկինում չեն ունեցել եթեիկական, առավել ևս ազգային առանձին ինքնության գիտակցություն և առանձին մշակույթ, առանձին գիր ու գրավոր մշակույթ, իսկ նրանց մտավորական ու արքեստագետ վերնախավը, սատարելով իր ժողովրդի համար ժամանակակից մշակույթի ձևավորումը, ձեռնամուխ է լինում հետին թվով մի փառավոր պատմություն և մշակույթ սարքելու գործին՝ որպես աղյուսներ օգտագործելով ուրիշ ժողովուրդների մշակույթներից ու պատմությունից պոկված բեկորն ու դրվագը։ Այդպես են փառվում խորհրդային աղորեցանցից թուրքերի զաղաքարաբախուները՝ սեփականելով, միաժամանակ, պարսկական բանաստեղծության դասական Նիզամիին, հայ պատմաբան և իրավագետ Միթքար Գոշին, պատմիչ Սովուս Կաղանկատվացուն և այլն։

⁵ E.J.Hobsbawm. *Nations and Nationalism Since 1780: Programme, Myth, Reality*. Cambridge, UK: Cambridge University Press, 1993, p. 10.

մական հիշողությունից»⁶: Իհարկե, կարելի էր՝ վկայակոչելով Գելների հեղինակությունը, ցույց տալ, որ իր պետականությունը պահպանած-չպահպանած լինելու հանգամանքից անկախ, հայ ժողովուրդը խկապես օժտված է ազգի կազմավորմանը բնորոշ հատկանիշներով, և դրանով իսկ արդեն հերքել Հռոբրառումի այնդումը հայերի մասին: Քայց հայ ժողովուրդի պարագայում մենք կարիք չունենք վիճարկելու Հռոբրառում (և Արևմուտքի քաղաքագետ- տեսաբանների գերակշիռ մասի) այն դրույթը, որ պետությունը վճռական դեր է կատարում (միջավայր ու պայմաններ է ստեղծում) ազգի կազմավորման համար: Այս դեպքում ևս Հռոբրառումի պնդումը հայերի մասին չի դիմանում պատմական փաստական քննադատության: Ահա թե ինչո՞ւ:

3. Եթե մենք պետության առաքելությունը վերցնում ենք որպես հասարակության քաղաքական կազմակերպման ձև, ապա, բովանդակային առումով, այս երեք հատկանիշներով կարող ենք բնութագրել պետության գործառույթը նաև Հիմ աշխարհի պատմության մեջ⁷, որտեղ կազմավորվող պետականությունների մեջ հայտնիում էին որոշակի տարածքի ցեղախմբեր և էթնոսներ: Հայ ժողովուրդի կազմավորման ավարտը և հայկական պետության առաջացումը պատմաբանները վերագրում են մ.թ.ա. 6-րդ դարին, Այրարատյան քաղաքություն ժամանակաշրջանին, երբ ավարտվում է Հայկական լեռնաշխարհի էթնիկական-լեզվական խմբերի միասնականացումը և ստեղծվում է, նախորդ ժամանակաշրջանների մշակութային ժառանգության հիման վրա, հայկական ազգային մշակույթը, որը վկայված է մեծարժեք նյութական ու հոգևոր հուշարձաններով, իսկ մ.թ. 4-րդ դարից՝ հայկական գրավոր մշակույթի հուշարձաններով: Եվ այստեղ հարկավոր է ձևակերպել մյուս կարևոր տեսական դրույթը: Ժողովուրդի պատմությունը՝ նրա պատմական զարգացումը՝ բարիս բուն իմաստով, սկսվում է այն ժամանակ, երբ նրա մշակույթը իր կարողականությունները ծավալում է մշակույթի քաղաքակրթական ծննդերի մեջ: Եթե գործածելու լինենք Ա.Կրյորերի տերմինները⁸, ապա կարող ենք ասել, որ «ավելի հետ մնացած (retarded)» հասարակությունների մշակույթը «վերարտադրողական» (reproductive) է, և գոյատևելու համար այն պարտավոր է այդպիսին լինել՝ իր կարողականություններն օգտագործելով իր ավադրութային-սովորութային մշակույթի պահպանության, կրկնության, վերարտադրության համար, այնինչ «ավելի առաջանցիկ (advanced) հասարակությունների մշակույթը» զարգացող, արգասավոր (productive) մշակույթ է, և որպես այդպիսին, որպես առաջանցիկ (advanced) գոյատևելու համար այն պարտավոր է իր կարողականությունները ծավալել յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանի մշակույթի ծննդերի մեջ՝ լցնելով ամբողջ «մշակութային տարածությունը»: Հենց այսպիսին են Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Հենց այսպիսի շեշտադրումներով է հաջորդող շարադրանքը:

⁶ E.J.Hobsbawm. *Op. cit.*, p. 76.

⁷ Իհարկե, Նկատի ունենալով այն վերապահումները, որոնք արվեցին Նոր ժամանակի պետությունների և Հին աշխարհի պետական կազմավորումների տարբերությունների մասին, «մշակույթ», «մշակույթի քաղաքակրթական ծննդի շերտ» տերմինների մասին, ինչպես և «ազգ» տերմինի գործածության համամականության պայմանական բնույթի մասին:

⁸ Տե՛ս A.L.Kroeber. *The Nature of Culture*. New Brunswick and London: Univ. of Chicago Press, 1987, p. 153.

Հնուց անտի Հայկական լեռնաշխարհը, նրան հարող շրջանները, իրանական բարձրավագնեակը եղել են հնդեվրոպական լեզվաբնտաճիքին պատկանող ցեղերի հայրենիքը: Հնդեվրոպական լեզուների տրոհման ընթացքում հայերն առանձնացել են արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերին. մ.թ.ա. 15-րդ դարի վերջին հայկական ցեղային միուրյունների միավորումից գոյացել է Հայաստ պետությունը (որը 12-11-րդ դդ. ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է Նախրի անունով): Հայ ժողովրդի կազմավորման համար վճռորոշ նշանակություն ունեցավ Ուրարտու պետությունը, որը մ.թ.ա. 9-6-րդ դդ. ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Լինելով ուժեղ կենտրոնացված պետական կազմավորում Ուրարտուն պայմաններ ստեղծեց հասարակական կյանքի ընդհանրական պետախրավական ձևերի առաջացման, և դրանց համապատասխան, ընդհանուր լեզվի՝ հայերենի գործածության հաստատման համար: Ուրարտուի (Վանի քաղաքության, Այրարատյան քաղաքության) ժամանակաշրջանը հայտնի է իր մշակութային հուշարձաններով՝ բերդաբաղարներ, ճանապարհներ, ջրանցքներ, կամուրջներ, սրբավայրեր-տաճարներ, ձեռատուններ անտառներ, ինչպես և վիմագրական կոռոններ: Հնագետները և մշակութաբան մարդարանները հավաստում են, որ դա ուրույն մշակույթ է՝ իր անհատական բնութագծերով, որոնցով այն տարբերվում է ժամանակի իր հարևան երկրների և ժողովուրդների մշակույթներից (խեթական, քարելա-ասորեստանյան, իրանական և այլն): Հայ ժողովուրդը եղավ Ուրարտու պետության ժառանգորդը թե՛ քաղաքական ու պետախրավական տեսակետից (հանձին Երվանդունիների և նրանց հաջորդած մյուս հարստությունների) և թե՛ մշակութային տեսակետից: Այստեղ պետք է ընդմիջարկել՝ մշակույթի ժառանգորդման վերաբերյալ տեսական մի քանի էական դիտողություններ ամելու համար:

Յուրաքանչյուր մշակույթ առանձնանում է որպես աշխարհներակալման մի եզակի եղանակի մարմնավորում, որը մի ամբողջականություն է և որը նա փոխանցում է սերնդեսերունդ: Մշակույթի տարբեր ձևերի մեջ պատմական յուրաքանչյուր առանձին ժամանակաշրջանում դրսւորվում են այդ առանձնահատուկ աշխարհներակալումն ու աշխարհմբռնումը. աշխարհիկ ու եկեղեցական շինարարական արվեստը և ճարտարապետությունը, օրինակ, ներքուստ կապված են ժամանակի մատենագրության ու մանրանկարչության, երաժշտության ու բանաստեղծության հետ, կենցաղի ու քարբերի առանձնահատկությունների հետ, իր պատմությունը շարադրելու ու վերապետությունը կերպի հետ և այլ՝ կազմելով մի միասնություն՝ տվյալ դարաշրջանի մշակույթի սինկրոնիկ ամրողականությունը: Մշակույթը նաև ժողովրդի պատմական հիշողությունն է. քո՞ն որ ուրիշներն ասեն, թե իրենցն են Ուրարտուն, Այրարատյան քաղաքությունը, քայլ ծշմարտությունն այն է, որ հայ ժողովուրդը միակն է, որ այսօր պահել է հուշը Բելի դեմ Հայկի, Չամիրամի դեմ Արայի կովի մասին, միակն է, որի շինարարական արվեստը և ճարտարապետությունը այսօր կորնած են միշնադարյան հայկական քանթերի ու բերդերի շինարարական արվեստի և ճարտարապետական արվեստի վրա, սա էլ իր հերթին՝ հելլենիստական շրջանի Հայաստանի կառույցների վրա, որոնց մեջ մասնագետը պարզորոշ տեսնում է Ուրարտուի շինարարական արվեստից և ճարտարապետությունից եկող ավանդությունների շարունա-

կուբյունը: Միայն այս դեպքում՝ մշակույթի դիախրոնիկ ամբողջականության դեպքում, իրավունքը ունենալու որևէ ժողովրդի մշակույթի մասին, ասելու, *որ հենց այս ժողովուրդն է գլուխ մշակույթի կրողը*:

4. Հաջորդ դիտողությունը վերաբերում է մշակույթի ժառանգորդման համար պայմանական հիշողության ունեցած դերին: Ժողովրդի պատմական հիշողությունը վավերագրված է պատմագրության մեջ: Հեզելը պնդում է, որ այն ժողովուրդը, որը չի ունեցել պետություն, չունի նաև պատմություն⁹: Եվ իրավ, պետության մեջ է ժողովուրդը ձևավորվում որպես ազգ, և իրականանում է ժողովրդի կեցության անցումը հանրային կյանքի նահապետական-քարոյական կազմակերպման ու կարգավորման մասնավոր ձևերից, որոնք ավանդույթի ուժով կրկնում-վերարտադրում են իրենց, դեպի հասարակական կեցություն, որին հատուկ են հասարակական կյանքի իրավական կազմակերպումն ու կարգավորումը և հոգևոր ու մտավոր մշակույթի ընդհանրական ձևերը: «Պետությունը,- ասում է Հեզելը մեկ ուրիշ տեղում,- իմբը է և խտացումը ժողովրդի կյանքի մյուս կոմկրետ կողմերի՝ արվեստի, իրավունքի, բարքերի, կրոնի, գիտության»¹⁰: Ըստ Հեզելի, հենց այդ ժամանակից են սկսվում թե՛ պատմությունը որպես օբյեկտիվ ընթացք, որպես իրար հաջորդող եզակի եղբուրյունների (res gestas- կատարված գործերի) շարան, որոնք արժանի են հիշատակության, և թե՛ պատմական շարադրանքը՝ այդ հիշարժան եղելությունների պատումը (historiam rerum gestarum)¹¹ պատմությունը «պատմագրություն» իմաստով¹²: Եվ պատմագրության սկզբնավորման ժամանակից ի վեր Հայաստանը և հայ ժողովուրդը մտել են պատմության շարադրանքների մեջ: Հայոց գրավոր պատմությունը (literary history), որը ձևավորվեց հայոց գրերի գյուտից անմիջապես հետո, արդեն ուներ ճեղքի տակ հսկայածավալ նյութ ու նաև՝ պատմության շարադրման նախօրինակ փորձ: Եվ պետք չէ զարմանալ, որ հայկական պատմագրությունը ասպարեզ մտավ կատարյալ երկերով և կազմեց ընդհանուր պատմագիտական գրականության էական մասը: Լավագույն օրինակը, իհարկե, պատմահայր Խորենացին է, որի «Հայոց պատմությունը» աչքի է ընկնում թե՛ իր աղբյուրներով (դրանք քառասունից ավելի են) և թե՛ իր գիտական՝ բննական պատմագրության տեսությամբ ու մեթոդարանությամբ: Այս առումով որքան հատկանշական է, որ Խորենացին հետադարձ հայացքով վերաիմաստավորում է անցյալը՝ ներկայացնելով այն որպես պատմական ընթացք և որպես ազգային պատմություն: Պատմության և մշակույթի տեսարանի համար այսօր էլ խիստ հետաքրքրական է, թե ինչպես է Խորենացին ներկայացնում պատմականորեն հայ ժողովրդի անցումը էրնիկական-ազգագրական բազմազանությունից դեպի էրնիկական ընդհանրություն և նրա ձևավորումը որպես ազգ իր բնօրբանում Հայաստան-Արմենիայում ստեղծվող պետական կազմավո-

⁹ «Ժողովրդի առկա կեցության հիմքում ընկած նպատակն է լինել պետություն և իրեն պահպանել որպես այդպիսին: Ժողովուրդը, որը կազմակերպված չէ որպես պետություն (ազգ չէ որպես այդպիսին), չունի որևէ պատմություն՝ բուն իմաստով» (Գ.Վ.Ֆ. Հեզել, Փիլիսոփայական գիտությունների հանրագիտարան, իտ. 3, Օգուս Փիլիսոփայություն, § 549: Գեղել. Թուականության համար այսօր էլ խիստ հետաքրքրական է, թե ինչպես է Խորենացին ներկայացնում պատմականորեն հայ ժողովրդի անցումը էրնիկական-ազգագրական բազմազանությունից դեպի էրնիկական ընդհանրություն և նրա ձևավորումը որպես ազգ իր բնօրբանում Հայաստան-Արմենիայում ստեղծվող պետական կազմավո-

¹⁰ Գեղել. Փիլոսոփիա պատմություն. // Գեղել. Սովորություններ. Տ. VIII, մ.-լ.: Հայաստան, 1935, ս. 47.

¹¹ Տե՛ս նոյն տեղում, էջ 58:

ուսմների մեջ¹²: Եվ հետո. պատմությունը, ըստ Խորենացու, մեզ տալիս է զիտելիք, ինչպես իմաստինք, անցյալի հասարակության մասին, ինչպես իմբն է ասում՝ «աշխարհական կարգերի և քաղաքական կարգերի մասին», իսկ պատմական շարադրանքը նա սահմանում է նոյն բառերով (պատմագիտության մեջ դասական դարձած տերմինարանությամբ, որ գործածում է նաև Հեգելը)՝ «կատարված գործերի պատում (historiam rerum gestarum), որոնք արժանի են հիշատակության»: «Հայր», այսինքն՝ Հայաստանն ու հայերը նոյնպես պատմություն ունեն, որովհետև «բազում գործք արտքեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գոյն յիշատակի»¹³: Իհարկե, իր ձևով դա բազավորների և իշխանների հիշարժան գործերի և հաջորդափոխության պատմություն է, բայց միայն այդ կերպ կարող էր գրվել ազգի և ազգային պետության պատմությունը: Ուրեմն, իր եռթյամբ դա հայ ժողովրդի պատմությունն է, որը որպես ազգ ձևավորվել էր Հին Հայաստանի պետական կազմավորումների մեջ և անընդհատ կրկնվելու մոտ իր ազգային պետությունը պահպանելու համար, ազգային անկախության համար, այս վերանվաճելու համար:

Պատմագրությունը դարձավ հայկական մտավոր մշակույթի էական մասը: Դար դարի հետևից գրվում էին «հայոց պատմություններ», որոնք սերնդեսերունդ փոխանցում էին ազգի, ազգային անկախության և ազգային պետականության այլ նույն գաղափարները, պատմության մատյաններն արտագրվում էին, իսկ 16-րդ դ. սկսած՝ տպագրվում էին, տպածվում, կարդացվում էին և անպայման մտնում էին դպրոցական-կրթական ծրագրերի մեջ: Մեզանում հայտնի փաստերը հենց այսպիսի շեշտադրումներով ես բերում եմ, առաջին հերթին, իհարկե, ցույց տալու համար, թե փաստական առումով որքան անհիմն են Հորսաբառնի դասողությունները հայերի ազգային ինքնության գիտակցության և պատմական իշխողության իրքն թե նեղ շրջանակների վերաբերյալ, բայց դրանք շոշափում են նաև ներկայում լայնորեն տարածված և վիճարկվող շատ որիշ տեսական դրույթներ. ազգայնականությունն է ծնել ազգեր, ազգային պատմությունը միշտ հորինված է լինում հետին թվով, հանրապետությունը գոյացնում է առավելաստեղծում. ազգային պետություններ գոյացել են միայն Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո:

5. Ծողովրդի ազգային ինքնուրյան էական հատկանիշը նրա պակրմական հիշողությունն է՝ պրված նրա առասպելների, լեզենդների, պարումների ձևով։ Դրա շնորհիվ է, որ անցյալի իրողությունները դաշնում են ժողովրդի՝ որպես մի յուրօնի անհատականության, ինքնազիտակցնան ամբողջականության բաղադրիչներ՝ ապահովեալ նրա ինքնուրյան (նրա Ես-ի) անբնիհատականությունը։

(Ինկալիկ այնպես, ինչպես որ ամեն մի անհատ մարդու ինքնության գիտակցության էական բաղադրիչ են են և ասածում են ինքնազորւթյան հորորությունները, որոնք անհնարինա և ամա միջնորդականության գործությունները)՝

¹² Դրան վերաբերող մի շատ կարևոր հատված կրեթմ գրաբար տեքստից. «...Երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատօնվիթինն ճշշի՞ զքագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, թե ո՞վ յումէ, և զինչ իւրաքանչիր որ ի նոցան գործեաց, և ո՞վ որ ի ցեղից որդեւոց ընտափ և մերավենայ, և ոյը ումաւը եկը ընտաեցնաք և մերավալացնաք, և գգործն ոգժամանակն իւրաքանչիր գորվ դոջմեն, ի ժամանակ ամսկարդ ամբարտակին շինուածո մինչև ցայժմ...» (Սովու Խորենացի, Պատմութիւն Հայոց; Թմբական բնագիր և Ներածութիւնը Ա.Վրեդենակի և Ա.Յանութիւնակի; Խմբախմբաւութուն 1913 թ հրատ.-ին: Էջուան Հայութ, 1991, Էջ 11-12):

¹³ *Lipuli intonuL* to 10.

դություններով վերապրվում են՝ ապահովելով նրա Ես-ի անընդհատական ամբողջությունը։ Այս առանձնահատկության կորուստը համգեցնում է ինպարունակացիայի։

Հայ ժողովրդի պատմական հիշողության այս ձևի (քանավոր պատումների ցուցադրումը ապացուցողական մեծ կշիռ է ստանում, եթե նկատի առնելու լինենք, որ ներկայում Արևմուտքում քաղաքական պատմության մեջ գերիշխող տեսակետի համաձայն, պատմագրությունը և առհասարակ գրավոր մշակույթը, մշակույթի «Էլիտար» շերտը և պատմական հիշողության գործառույթի ու նրա փոխանցման մեխանիզմը իրեն թե օտարված են մշակույթի կրող ժողովրդի իրական կեցությունից, ուստի և դրանցով ավանդված անցյալի իրողությունները «դուրս են ժամանակակից հայի հիշողությունից», ուրեմն՝ դրանք նրա ազգային ինքնության գիտակցության իրական քաղաքիչները չեն։

Այս թեզի դեմ իմ առարկությունները նույնպես արված են ուրիշ տեղերում¹⁴, իսկ այստեղ կուզենայի շարունակել դրանցից մեկի ցուցադրումը։ Ահավախիկ Հին Հայաստանի, Ուրարտական թագավորության և Այրարատյան թագավորության ժամանակների պատմության եղելություններն արձագանքվել են հայոց հին Էպոսում՝ առասպելներում ու լեզենդներում։ Եվ այդ եղելություններից ավելի քան մեկ հազարամյակ անց Մովսես Խորենացին իր ժամանակի Գործան երգերի մեջ դրանց պատումներն օգտագործել է որպես աղյուրներ իր «Պատմության» համար պատմական վերակազմություններ կատարելիս¹⁵։ Բայց ահա Խորենացուց և ընդհանրապես մեր առաջին պատմիչներից մեկ և կես հազարամյակ անց՝ 19-րդ դարում, Հայոց աշխարհի տարբեր գավառներում՝ Սասունում, Մուշում, Վասպուրականում և այլուր, իսկ արդեն Սեծ եղենից հետո, 20-րդ դարի 30-ական թթ. քանասացներից գրի առնվեցին հայոց նոր էպոսի՝ «Սասնա ծոերի» պատումները։ Հայտնի է, որ այդ էպոսում վիպականացված են Հայաստանի արարական նվաճումների շրջանի իրողությունները, որոնք անձնավորված են Մըրա (Մըրդի՝ Եգիպտոսի) Սելիքի և Սասունի Դավթի վիպական կերպարներուն։ Բայց մի զարմանահրաշ քան է, որ այդ էպոսը սերնեներուն կենդանի պատումներով մեր ժամանակներն է հասցել ժողովրդի պատմական հիշողությունը մեր քվարկությունից էլ շատ դարեր առաջ կատարված իրադարձությունների մասին, Ասորեստանի և Բարեկոնի ժամանակների մասին՝ անձնավորված Սանասարի և Բաղդասարի, Ծովինարի, Զոշ Սիերի, Պատիկ Սիերի և ուրիշ կերպարներուն, Դուռն Սիերի պատկերի մեջ և այլն։ Քաղաքագետ-պատմաբանի մտքով չի անց նում, որ կա մի ժողովլորդ, որն իր ծննդաբանության պատմությունը հասցել է մեր օրերը ոչ միայն հնագիտական-քարեղեն կոթողների, վիմագիր արձանագրությունների, Աստվածաշնչի և գրավոր պատմության վկայություններով, այլև

¹⁴ Սասնավորապես, տե՛ս «Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ» (Եր., ԳԱԱ հրատ., 2005), Բաժին 9:

¹⁵ Կրերեմ Նաև նույն ժամանակին վերաբերող մի ցայտուն օրինակ հեղինակավոր աղբյուրից. Ուրեմն Թմւանու կշում է, որ Դավթի Անհաղթի «Սահմանը իմաստափրութեան» երկի հայերեն տարբերակով, այստեղ, որտեղ հունարեն տարբերակով բերված են լուսաբանող օրինակներ Հոմերոսից և հունական առասպելաբանությունից, դրանք փոխարինված են հայկական հնագույն առասպելների ու լեզենդների հերոսներով, որպեսզի հայ ընթերցողի համար հեշտ լինի հասկանալ գիրքը (տե՛ս R.W.Thomson. The Armenian version of David's "Definitions of Philosophy". // In: David Anhaght, the "Invincible" Philosopher. Ed. A.Sanjian. Atlanta, Georgia: Scholars Press, 1986, p. 40).

սերնդեսերունդ ավանդված կենդանի պատումներով, որոնք իրենք խև հավատում են այդ վկայությունները և իրենք էլ դառնում են կարևորագույն սկզբնաղբյուր պատմական գիտության՝ քննական պատմության համար:

Եթե ասում եմ *քննական պատմություն*, ուզում եմ շեշտած լինել այն անփոխարինելի նշանակությունը, որ գիտական պատմագրության համար կարող են ունենալ պատմական հատուկ և օժանդակ գիտակարգերը, տվյալ դեպքում մասնավորապես աղբյուրագիտությունը, որի տեսանկյունից էականական առասպելները վիպաքներ են, պատմական եղելությունների վիպականացված պատումներ, խև հնագիտական առարկաները, իրենց բնույթով, իրենց խորհրդանշներով ու խորհրդապատկերներով, նույնայն պատումներ են անցյալի մարդկանց, նրանց մտքերի, պատկերացումների, հավատալիքների ու գործերի մասին, որոնք սպասում են իրենց պատմական վերակազմության, կամ՝ դրանց ամրողության մտակառուցմանը: Մեծարանքով կարող ենք նշել հունական և պարսկա առասպելների՝ որպես պատմական սկզբնաղբյուրների, վերլուծությունը և մեկնարարանությունը Խորենացու կողմից: Էպոսի, որպես վիպականացված պատմության՝ վիպաքի, լավագույն լուսարանումը կարող ենք գտնել Զամբատիստա Վիկոյի՝ Նոր Ժամանակի եվրոպական պատմափիլիստիկայության սկզբնավորողի մոտ. տեսե՛ք, թե նա ինչ հրաշալի, մանրակրկիտ վերլուծություն և մեկնարանություն է տալիս Աքիլեսի վահանի նկարագրությանը «Իլիականում»¹⁶: Այս տեսության վերաբերյալ, հատկապես նրա մոտեցումների նշանակության բացարձակացնան դեմ արվել են լորջ վերապահումներ: Սակայն կուգենայի հիշատակելու ուսու ականավոր ազգագրագետ Ս.Ա.Տոկարևի մի դիտարկումը «առասպեկտարանական դպրոցի» (և, հետևաբար, նրան հատուկ մոտեցման գիտական կարևորության) վերաբերյալ¹⁷: «Առասպեկտարանական դպրոցին» է պատկանում այն գաղափարը, նշում է Տոկարևը, որ հնդեվրոպական ժողովուրդների առասպեկտարանությունը եղել է մի միանական ամրողություն, որը նաև նարամանվել է այդ ժողովուրդների բաժանման ընթացքում: Բայց մի՞թե այդ միանական ամրողության արձագանքը չէ, որ «Սասնա ծուերը» իր կենդանի պատումներով հացըրէլ է մինչև մեր ժամանակները: (Հետաքրքրական կլիներ ունենալ դասական բանասիրության մոտեցմամբ կատարված մի հատուկ մասնագիտական հետազոտություն՝ «Սասնա ծուեր» հայկական էպոսի հնագույն ենթաշերտերը որպես Հին աշխարհի պատմության վերակազմության սկզբնաղբյուր):

6. Ասվածը կարծես թե սպառիչ պատասխան է տալիս հայկական մշակույթի և պատմության շարունակականության (continuity) հարցին (որ մշակույթի և պատմության դիախորոնիկ ամրողականության տեսանկյուններից մեկն է): Ես չեմ ուզում այդ հարցը այստեղ քննել ընդհանուր տեսական դատողությունների մակարդակում: Նկատի ունենանք, որ մշակույթի տեսության և պատմագիտության տեսա-

¹⁶ Տե՛ս Դ.Ջ.Վիկո. Основания Новой науки об обшее природе наций. Ленинград: Изд. Художественная литература, 1940, т. 197-198: Խև առհասարակ Հոմերոսի «Իլիականի» և «Որիսականի» որպես գիտական պատմության սկզբնաղբյուրների մասին, նա գրել է. «Հոմերոսը առաջին Պատմաբանն է, որ ամրոջ հերանոսական շրջականից հասել է մեզ... Հոմերոսի պոեմներն արժանի են մեծագույն վստահության, քանի որ դրանք Հնագույն Հունաստանի ավանդությունների երկու մեծ շտեմարաններն են» (Առյուն տեղում, էջ 368):

¹⁷ С.А.Токарев. История зарубежной этнографии. М., 1978.

կան մեկնաբանությունների համար գերադասելի է կոնկրետ պատմական վերլուծությունը: Ահավասիկ մշակույթի և պատմության շարունակականության խնդրի լրացարանան տեսակետից խիստ հատկանշական է քրիստոնեության ընդունումը Հայաստանում: Դա մի արմատական փոփոխություն էր Հայաստանի հասարակական կյանքում և մշակույթի մեջ, որը համբեկում էր ընդհանուր պատմության բեկումնային ժամանակաշրջանի հետ. պատմական ասպարեզից աստիճանաբար հեռանում էին հունա-հոռոմեական իրավաքաղաքական համակարգը և մշակույթը՝ տեղի տալով վաղ միջնադարի հասարակական հարաբերությունների և մշակույթի առջև: Հայ պատմագրության մեջ, հատկապես Ազարանգեղոսի «Հայոց պատմության» մեջ քրիստոնեությունը հակադրված է հեթանոսությանը տրամագծորեն՝ իր բարոյական արժեքային համակարգով և կրթալուսավորական առաքելությամբ՝ ընդունմ հեթանոսության բիրտ բարերի և նոգական-կոռապաշտական արարողությունների, նկարագրված է հեթանոսական մեհյանների հիմնահատակ կործանումը: Իհարկե, Ազարանգեղոսի «Պատմության...» մեջ գոյմերը խտացված են, և դա պայմանավորված է հեղինակի քրիստոնեական հավաստի ջատագովի կեցվածքով ու նաև՝ գեղարվեստական պատկերը տպավորիչ դարձնելու միտումով, ինչպես դա հասուն էր ժամանակի պատմագրությանը: Ուստի վերլուծաբան-պատմաբանները վերապահումներով են վերաբերվում այդ նկարագրություններին: Ազարանգեղոսի «Պատմության...» աշխարհաբար բարգմանության հեղինակ Արամ Տեր-Ղևոնյանը համարում է, որ «անցումը հեթանոսությունից քրիստոնեության, ըստ Էռիքյան, մեղմ ձևով իրականացավ», և բերում է երեք գորավոր փաստարկներ: Հեթանոսական մեհյանները հիմնովին չեն կործանվել, «քանդում էին մեհյանների բազինները (գրիասեղան, արձան), իսկ շենքերը վերածվում էին եկեղեցիների». այդպես եղավ, որ «Դ.-Ե. դարերի հայկական ճարտարապետությունը շատ բան ժառանգեց հեթանոսական ճարտարապետությունից և համարվում է նրա անմիջական շարունակությունը»: Նույնիսկ նոր կազմավորվող քրիստոնյա հոգևորականությունը համալրվում էր քրմերի որդիներով: Վերջապես, հայ եկեղեցին յուրացրեց նաև հեթանոսական տոնները (Ծաղկազարդ, Զատիկ, Վարդավառ և այլն)¹⁸: Հայաստանում քրիստոնեության ընդունումը արձագանք գտավ այդ պատմական ժամանակաշրջանի ամբողջ քրիստոնեացող աշխարհում: Հատկանշական է, որ Ազարանգեղոսի «Պատմությունը...» բարգմանվել է ժամանակի քաղաքակիրք ժողովորդների շատ ու շատ լեզուներով (իսկ հետագայում նաև եվրոպական նոր լեզուներով): Ասացի, որ դա որակապես ուրիշ իրողություն էր, բայց հայկական մշակույթը ծավալեց իր ներքին կարողականությունները հասարակական-քաղաքական և մշակութային-քաղաքակրթական այդ իրողության բոլոր բնագավառներում, այն հարստացրեց մասնավորապես գրավոր մշակույթը, հանրային կյանքի կազմակերպման իրավական եղանակներով, երբ նկատի ենք ունենում «Կանոնագիրը Հայոց»-ի լայն գործառույթը:

Մյուս խիստ կարևոր պատմական իրողությունը, որի մեջ նույնպես իր մասնակցությունն ունեցավ հայկական մշակույթը, հետևյալն է: Արևմտյան քաղա-

¹⁸ Տե՛ս Ազարանգեղոս, Հայոց պատմություն: Երևան, 1983: Ծանոթագրություններ, էջ 517-518:

քակրբության ձևավորման գործոններից մեկը անտիկ դասական՝ հունա-հռոմեական մշակույթի պահպանումն ու նրա փոխանցումն էր եվրոպական միջնադարին: Սա ընդունում են քաղաքակրբության պատմության և մշակույթի տեսության բոլոր մասնագետները, անկախ այն բանից, թե ինչպես են նրանք լուծում մշակույթի և պատմության շարունակականության (continuity) հարցը: Այս հարցի լավագույն շարադրանքը տվել են ուսումնականության գուգորդումը հունա-հելլենիստական մշակույթի և հռոմեական պետարակական ավանդույթի հետ¹⁹: Թե՛ պատմաբան Բառնեսը, թե՛ մշակութաբան Կրյորերը, թե՛ միջնադարագետ-պատմաբաններ Ուկոլվան, Սյուզյումովը համարում են, որ այդ գուգորդումը Եվրոպայում տեղի ունեցավ ուշացումով, մինչև որ կայունացան էքնիկական-լեզվական գործընթացները «մուր դարերից» հետո: Կրյորերը նաև նշանակություն է տալիս այն բանին, որ Եվրոպան որոշ ժամանակ կտրված էր անտիկ քաղաքակրբության օրրանից, որը նա անվանում է «օյկումենա»՝ գործածելով իին հույների տերսինը, և որին նա մեծ տեղ է հատկացնում առհասարակ քաղաքակրբությունների պատմության մեջ²⁰:

Հայաստանը այն սակավաթիվ երկրներից էր, որը, գտնվելով անտիկ քաղաքակրբության օրրանին («օյկումենայի») շրջանում, պահպանեց անտիկ մշակույթը և իրականացրեց նրա այն յուրօրինակ սինթեզը քրիստոնեության հետ, որը մոտ հինգ դար անց բնութագրական դարձավ նոր՝ Արևմտյան քաղաքակրբության ձևավորման համար, եվրոպական նոր ազգերի պատմության մեջ: Խոսքը ոչ միայն հունական դասականների, հելլենիստական և վաղ քրիստոնեական հեղինակների գրվածքների հայերեն բարգմանությունների մասին է (որն ինքնին արդեն մեծագույն մշակութային արժեք է, և որը փոխանցվեց Եվրոպական նոր կազմավորվող մշակույթին): Հայկական մշակույթը, քաղաքակրբությունների հաջորդափոխության այս ժամանակաշրջանում, կատարեց իր առաքելությունը ու նաև՝ իր կարողականությունները ծավալեց ժամանակի մշակութային աճրող տարածության մեջ:

7. Ընդհանուր առմամբ, X-XV դդ. եղան իր իսկ հայկական մշակույթի զարգացման հաջորդ բարձրակետը V-VII դդ. Ուկեղարից հետո: Եվ այստեղ նույնպես հարկավոր է շեշտել հայկական մշակույթի՝ եվրոպական միջնադարին համահունչ զարգացումը: Հայկական մշակույթի՝ եվրոպական մշակույթին համահունչ զարգացման հետաքրքիր փաստերից է հայոց պատմության և մշակույթի առնչությունը XI-XIV դդ. Եվրոպայի և եվրոպական մշակույթի հետ: Իսկ այս դեպքում թերևս ամենից կարևորն է հայոց պետականության և պետականական մտքի զարգացումը: Հորսրապումը պարզապես չգիտի հայոց պատմությունը, երբ ասում է, թե հայկական փոքրիշատե կարևոր պետությունը Տիգրան Մեծի թագավորությունն էր, և այն էլ դուրս է գտնվում ժամանակակից հայի առկա հիշողությունից: Իսկ ինչու՞ է Հորսրապումը կարծում, թե «փոքրիշատե կարևոր պետությունը» պետք է միայն կայսրություն լինի՝ Տիգրան Մեծի թագավորության նման: Հարկավոր է արձանագրել, որ Բագրատունյաց թագավորությունը, Զաքարյանների իշխանապե-

¹⁹ Վերլուծությունը տե՛ս իմ “Национальная культура с точки зрения философии истории” աշխատության մեջ, էջ 30-32:

²⁰ Ste'v A.L. Kroeber. *The Nature of Culture*, pp. 382-383, 405.

տուրքունը, Կիլիկիայի հայկական պետությունը²¹ ժամանակին ոչ միայն եղան այս ամբողջ տարածաշրջանի հզոր, բարգավաճ, բարձր մշակույթով պետությունները, այլև պետական բարեկարգության տեսակետից ներկայացնում էին զարգացման բարձր աստիճան, իհարկե, միջնադարյան չափանիշներով, որով նրանք համեմատենի էին միջնադարյան Եվրոպայում կազմավորվող պետականության տիպարին:

Կիլիկիան Հայաստանը դարձավ այն կամուրջը, որով հայ մշակույթը հաղորդակցվում էր Եվրոպական մշակույթի հետ: Արևոլու Թոյնիքն միջերկրածովյան երկների այդ ժամանակի մշակույթն անվանում է Եվրոպական նոր քաղաքակրթության պատմական ենթամշակույթը, Արևոլյան քաղաքակրթության նախափուլը²²: Եվ Կիլիկիայի հայկական պետության շնորհիվ ամբողջ Հայաստանը ներգրավվեց միջերկրածովյան երկների այդ յուրօրինակ համախմբության մեջ, լիիրավ կերպով հավասար երկխոսության մեջ մտավ նրանց հետ, որովհետև ծավալել էր իր կարողականությունները ժամանակի մշակութային ամբողջ տարածության մեջ՝ հոգևոր ու մտավոր մշակույթի բոլոր ոլորտներում, մշակույթի վերին քաղաքակրթական շերտի ձևերի մեջ, ընդհուպ միջնու հանրային կյանքի իրավական կարգավորումը և մշակույթի շարունակականությունն ապահովող կրթամշակութային հաստատությունները:

Զավարովող նոր՝ Արևոլյան քաղաքակրթության հետ հայ մշակույթի փոխգործողության վկայությունները եղան Եվրոպական փիլիսոփայական-աստվածաբանական գրականության նշանավոր երկերի, մասնավորապես Թովման Աքվինացու աշխատությունների հայերեն բարգանաւությունները, կարոլիկ Եկեղեցու միսիոնների հայերենով գրված աշխատությունները, այդ թվում նաև հայոց լեզվի ու պատմության վերաբերյալ: Բոլոր վերապահումներով հանդերձ, դա վկայում է, որ, ինչպես և V-VII դարերում, Հայաստանն ու հայ մշակույթն ընկալվում էին որպես քրիստոնեական համաշխարհի մի մասը: Եվրոպական մշակույթի հետ հայ մշակույթի համահունչ զարգացման այս համատեքստում կարող ենք պնդել նաև հետևյալը: X-XV դարերը Եվրոպական մշակույթի պատմության այն ժամանակաշրջանն էին, երբ ձևավորվեց անցումը դեպի հումանիզմ գաղափարախոսության մեջ, գրականության և արվեստի մեջ: Բայց անկասկած են հումանիզմի միտումները այդ ժամանակաշրջանի նաև հայ մշակույթի մեջ: Վկան Հովհաննես Երզմկացու քարոզները, Միսիթար Գոշի, Վահրամ Ռաբունու, Ներսես Շնորհալու երկասիրությունները, նույն Շնորհալու պեղիան, նրա շարականները, ինչպես և միջնադարյան քատրոնի ձևավորման միտումը՝ պատարագային դրամայի աշխարհականացումը, գեղարվեստական տարրերի մուտքը Եկեղեցական ծիսական ձևերի մեջ և այլն:

Քաղաքական տեսակետից՝ Միջերկրածովյան քրիստոնեական պետությունների շրջանակի մեջ Կիլիկիայի հայկական պետության ներգրավման և ինտեգրացման ճանապարհին արժանահիշատակ իրադարձություն դարձավ Կիլիկյան Հայաստանի թագավորության հռչակումը 1198 թ., որը իրավի միջազգային հնչեղություն ստացավ ... Լևոն Բ-ի թագավորության հանդեսին եկել էին բոլոր պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչները և, իհարկե, պատվիրակներ Սեծ Հայքից: Լևոնի թագավորությունը դիտվում էր որպես առհասարակ հայոց պետականության վերականգնումը²³: Թոյնիքին ասում է. «Արևոլյան քրիստոնեության հասարակական և Եկեղեցական կառուցվածքի մեջ Կիլիկյան Հայաստանի ան-

²¹ Ծատ կարևոր է, որ Կիլիկիայի թագավորները հորջորջվում էին Հայոց թագավոր: Եվ իրավի, միջազգային հարաբերություններում նրանք ներկայացնում էին Սեծ Հայքի շահերը, իսկ Կիլիկիայում համազային և կարևորագույն պետական ու Եկեղեցական հարցերի կարգավորմանը մասնակից եր դարնուու Սեծ Հայքի աշխարհիկ և Եկեղեցական ավագանին:

²² A.J.Touynbee. *A Study of History*. London-New York-Toronto: Oxford Univ. Press, v. I, 1955, p. 23.

²³ Եվ օճից Ալուսը թագավոր Հայոց, ասում է Կիրակոս Գանձակեցին: Տե՛ս նաև Ա. Չամչեանց, Պատմութիւն Հայոց: Հատ. Գ, Վենետիկ, 1786: Վերատպ.՝ Եր., 1984, էջ 165:

դամագրության այս ձևական ճանաչումը խթանեց Լևոնի քագավորության արևմտականացումը»²⁴: Եվրոպական մշակույթի հետ այս փոխազդեցությունների համազգային բնույթի դրսնորումներից մեկը եղավ այն, որ հայոց լեզվի մեջ գոյացավ և մինչև մեզ հասավ մշակութային և հասարակական, պետականական տերմինարանության մի ամբողջ շերտ: Չնայած այն ժամանակների համար մեծ հեռավորություններին, մենք չենք զարմանում, եթե Կեչառիսի եկեղեցին գոտևորող արձանագրության մեջ հանդիպում ենք «սյուզերեն» բառին:

8. Արևմտյան որոշ քաղաքագետ-պատմաբաններ, բյուր մեկնարանություն տալով եվրոպական երկրների ու ժողովուրդների պատմության ընդհանրացման և հմատավորման վրա հիմնված ժամանակակից պատմագիտական և պատմափիլսոփայական տեսություններին, անտեսում են հայկական մշակույթի և պատմության այս բոլոր իրողությունները: Ռուսական Գրիգոր Սյունին, օրինակ, հայ ժողովուրդը, նրա ամբողջ պատմության ընթացքում, դիտում է իրեն առանձին ազգագործական խմբերի մասնատված և ոչ թե իրեն մի միասնական ամբողջություն, որովհետև անտեսում է հայկական մշակույթի քաղաքակրթական շերտի ընդհանրական ձևերի շարունակական զարգացումը ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում և դրանց շնորհիվ՝ հայ ժողովրդի ազգային միասնության ապահովումը: Այս հիմունքով Սյունին մերժում է հայ ժողովրդի իրավունքները պատմական Հայաստանի նկատմամբ: Սա ազգայնական մոտեցում է, 1915-ին այն կործանարար եղավ, գտնում է նա²⁵: Մեկ ուրիշ դեպքում, իրեն տեսական հիմնավորում տալով Արևելյան Հայաստանի (և դրա հետ միասին՝ Հայաստանի Հանրապետության) տարածքի սահմանափակմանը Առաջին համաշխարհային պատերազմից հետո, Սյունին գրում է, թե ուս պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայերը առհասարակ չեն ունեցել մի «ֆիքսված» տարածք, որտեղ հայերի մեծ մասը բնակվեր կամ լիներ մի հայկական պետություն՝ իր սովորական քաղաքական հաստատություններով²⁶: Այնինչ, ինչպես տեսանք, այս պնդումներն իրականությանը չեն համապատասխանում. հայերի ոչ թե «մեծ մասը», այլ հիմնական զանգվածն ապրել է Հայաստանում, որտեղ ստեղծել է պետություններ և որի մշակութային դիմագծը եղել է միայն և միշտ հայկական:

Իսկ եթե խոսքը վերաբերում է ուշ միջնադարին, ապա առհասարակ միջնադարյան որևէ մեկ պետությունը չէր կարող լինել և չի եղել ազգային-էքնիկական մեկ կազմով: Սա՝ ի գիտություն պատմաբան Սյունիի: Խոսք կարող է լինել միջնադարին հատուկ ֆեոդալական (ավատատիրական) կառուցվածքի հիերարխիական (սյուզերեն - վասար) աստիճանակարգությունների մեջ էքնիկական ազգային միավորների (ասենք՝ իշխանապետությունների) գոյության մասին: Չեմ ուզում մանրամասնել Կիլիկյան Հայաստանի օրինակը, այն, որ նա արտաքին հարաբերություններում ներկայացնում էր Մեծ Հայքի շահերը, ինչպես և ապահովում էր եկեղեցական ու մշակութային կյանքի համազգային մեխանիզմ-

²⁴ A.Toynebee. *Op. cit.*, vol. VIII, p. 369-370.

²⁵ R.G.Suny. *Nation-making, and the End of Empire. A New Perspective on the Events of 1915.* // The Fourth Annual Vardanants Day Armenian Lecture, presented at the Library of Congress, May 1, 1996

²⁶ History of the Armenian People. Vol. II. New York, 1998, p. 120.

ների գործունեությունը: Իսկ ուշ միջնադարին հատուկ ֆեռդալական մասնատված և հիերարքիական աստիճանակարգությունների մեջ Հայաստանում իրենց տեղն ունեին նաև հայկական իշխանապետությունները՝ Սասունում, Ղարաբաղում, Զանգեզուրի լեռնաշխարհում, Լոռիում, Ձեյրունում և այլուր: Դրանցում հանրային կյանքը կարգավորվում էր, որպես կանոն, հայկական օրինակարգված նորմերով՝ ի տարրերություն շրջապատող թյուրքական և քրդական ցեղերի պահպան-սովորության կենցաղավարության: Ամենից ծանոթ օրինակը Ղարաբաղի մելիքություններն են, որոնց ներքին հանրային կյանքի ու նաև արտաքին հարաբերությունների ինքնուրույն լինելը կասկած չի հարուցում. միայն պատմական դիվանագիտական դոսիեն մեծադիր հատոր է կազմում: Այդպես է նաև հայ-վրացական համատեղ ուժերով ազատազրված, Վրաստանի ֆեռդալական կառուցվածքի մեջ նտած և «Հայկական օրենսդրությամբ» կառավարվող Զաքարյանների վասալական իշխանապետությունը, որը հետագայում 1801 թ., մտավ Ռուսաստանի կայսրության մեջ: Զաքարյան և Օքբելյան իշխանները գիտեին, որ Հայաստանի հողերն են ազատազրում ու պաշտպանում, ուսական զորքերի սպանները և այստեղ եկող ուսւ ճանապարհորդները գիտեին և ասում էին, որ Հայաստան-Արմենիա են եկել (վկայակոչե՞նք Պուշկին): Դա միայն Սյունին է մխտում:

9. Ազգայնականության ժամանակակից արևմտյան քննադատները՝ հասարակագետները, քաղաքագետները, պատմաբանները, փիլիսոփանները, ուշադրությունը դարձնում են քաղաքական պատմության վրա, ազգայնականության գաղափարը դիտում են որպես քաղաքական գաղափար և հետությամբ կողըկողըի են դնում «ազգայնականություն» ու «անջատողականություն» XIX դարում և XX դարի սկզբին: Այս հակապատմական մոտեցմամբ հետին թվով ակամա (գուցե և միտունապոր կերպով) արդարացվում են Օսմանյան կայսրությունը և Թուրքիան՝ որպես իրք թե «ազգայնականությանը» և «անջատողականությանը» դիմակայած երկիր: Մինչդեռ հայ-քուրքական հարաբերությունները պարզապես միայն քաղաքական դիմակայության հարաբերություններ չեն («ազգայնական» անջատվող ժողովրդի և իբր իր «տարածքային ամբողջականություն» պաշտպանող պետության միջև), դրանք տնտեսական, հասարակական, իրավաքաղաքական, մշակութային, մի խոսքով՝ քաղաքակրթական երկու տրամագծորեն հակադիր կողմնորոշումների դիմակայություն էին: Հայերի կողմից որդեգոված ազատության գաղափարը մի մեկուսի քաղաքական գաղափար չէր, այլ մի մասն էր եվրոպական լուսավորական, կրթական, պատմամշակութային, իրավական մի ամբողջ գաղափարախոսության և, միաժամանակ, համապատասխանում էր հայոց պատմության և մշակույթի դարավոր ավանդույթներին և հայ կյանքում ամբողջ XIX դարում և XX-ի սկզբին կատարվող հասարակական-տնտեսական փոփոխություններին, որոնցով այն ավելի ու ավելի էր առանձնանում Օսմանյան կայսրության և Թուրքիայի՝ ասիական բռնապետական այդ երկրի, ընդհանուր նկարագրի մեջ:

Գրելով այս մասին, Մ.Վարանդյանն այնուեւու մեջքերում է Հաքստիառօւգենին. «Հաքստիառօւգեն, հոչակավոր գիտմական ճանապարհորդը, պնդում էր, թե հայը միակ քրիստոնյա ժողովուրդն է Տաճկաստանի մեջ,

որ ընդունակ է կազմակերպվելու իրեն ճշմարիտ հասարակություն...»²⁷: Յաքստհալուգեմը սա գրել է 19-րդ դարի կեների մասին²⁸, բայց նույն են վկայել և նույն համոզմումքն են հայտնել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Արևմտյան Յայաստան այցելած դիվանագետները, գիտնականները, ճանապարհորդները²⁹: Իսկ ինչ է նշանակում Եվրոպացի գիտնականի բերանում «ժողովուրդը, որը պատրաստ է կազմակերպվելու իրեն ճշմարիտ հասարակություն», եթե ոչ ժողովուրդը, որը պատրաստ է կազմակերպվելու իրեն քաղաքացիական հասարակություն ոչ թե ցեղային, եթե կազմական, ոչ թե կրոնական հիմունքներով, այլ՝ իրավական, իրավաքաղաքական, ինչպես Վարանյանն է ասում ինքնավարության համար հասունացած: Իսկ դրա հիմքում ընկած էր հայ ժողովորդի նկատելի առաջնորդացը Եվրոպական քաղաքակրթության հիմնական ոլորտներում արդյունաբերություն և առևտուր, կրթություն և գիտություն, գրատպություն և մանուլ, արվեստ և գրականություն՝ ընդուակ մինչև սեփական Սահմանադրություն, թեկուզ որպես միտում:

Ի՞նչ արժե թեկուզն այն փաստը, որ Ասիայի խորքում հայ ժողովուրդը միակն էր, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իր հայրենիքի ամբողջ տարածքում, ինչպես և մյուս հայաբնակ վայրերում ու գաղթօջախներում արդեն իրազործում էր մասնուկների ընդհանուր գրածանաշուրջյուն՝ գոնե տարրական, ծխական դպրոցներում, ել չենք խոսում բազմաթիվ միջնակարգ ու մասնագիտական ուսումնարանների մասին փոքրիշատե նշանակալից բնակավայրերում, կամ՝ գրքերի, դասագրքերի, մամուլ՝ լրագրերի, ամսագրերի՝ վիճակագրական տեսակետից ապշեցուցիչ թվի մասին և այլն: Հարկավոր է ի մի բերել այս ամենը անպայման համեմատական մի համատեքստում, պատմական այդ ժամանակի համար, Եվրոպական չափանիշներով և ճանաչել տալ օտարին, որպեսզի ժամանակակից օտար գիտնականը, քաղաքագետն ու դիվանագետը չհամեմատեն դարասկզբի հայոց գոյամարտը երկու ցեղերի անջատողական կրիզների հետ: Եվ հետո, ի՞նչ են ասում «վտանգված մեծամասնության» վարկածի հին ու նոր կրողնակիցները. ի՞նչ է, ասիական խավար միջավայրում հայերը չապրեի՞ն որպես ազգ, չունենայի՞ն դպրոց, զիր ու գրականություն, մամուլ, քատրոն, որպեսզի «չգրգրեի՞ն» շրջապատող խավար զանգվածին և «չվտանգեի՞ն» իրենց: Գուշե պետք է կանխավ իմանային, որ Մեծ եղեննով, «կարմիր Արևելքի» բոլշևիկյան ցնորական ծրագրով, Եվրոպական քաղաքակրթությունը ներկայացնող մեծ տերությունների դիվանագետների խայտառակ չարչիական հաշվարկներով պետք է ամայացվեր ու աշխարհի քարտեզներից ջնջվեր արդեն Եվրոպականացող մի ամբողջ տարածաշրջան՝ Հայաստանը...

Ասվածն ավելի ցցուն դարձնելու համար նշենք, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը բուրքերի համար Եվրոպական վերափոխումները մնում էին մի արտաքին քան. միայն մի մտավորական վերնախավ ձգուում էր Թուրքիայի ամբողջ հասարակական կյանքի Եվրոպականացման, բայց բուրք հասարակությունն այն ժամանակ պատրաստ չէր դրան և մնում էր անհաղորդ: Ուրեմն, հայ-թուրքական հարաբերություններում ծագող հակամարտությունն ավելի խորն էր. Օսմանյան կայսրությունը և ապա Թուրքիան կանգնած էին երկրներանքի առջև՝ մնալ անգրագետ, խավար մի երկիր, հանդուրժել զանազան ցեղապետերի

²⁷ Մ. Վարանոյան, Հայրենիքի գաղափարը, Պեյրութ, 1985, էջ 90-95 (գրված է 1904 թ.):

²⁸ Ste'v A. Haxthausen. *Transcaucasia*. L., 1854. Ուսու. թարգմ. A. Ղաշտակյան. Զակավակասկի կողմանական համաշխարհային համար 1857.

²⁹ Յաքստհալուգեմի ուղեգործությունների յուրովի շարունակությունը կարծես լինի Հ. Լիսի «Հայաստան» աշխատությունը:

անիշխանությունն ու կամայականությունը գավառներում, ունենալ հետամնաց տնտեսություն և ռազմականացված ու բյուրոկրատացած վերնախավ, որը պետք է շարունակեր ապրել հապատակ ժողովուրդների կենեքման ու կողոպուտի հաշվին, ապրել վաչկատուն ժամանակներից ժառանգած կենցաղով ու հարաբերություններով, կամ էլ կատարել արմատական բարենորոգումներ եվրոպական չափանիշներով: Այս իդեալին էր, որ հավատաց հայ հասարակությունը: Այստեղից, վերջապես, ևս մի վճռորոշ հանգամանք. արևմտահայության համար, իսկն ասած, առաջնայինը «անջատողականությունը» չէր, այլ՝ պայքարը ազգային, կրոնական, սոցիալական ճնշումների, անարդարությունների դեմ, երկրի ազատականացումը, ուստի և նա մեծագույն ջանքեր գործադրեց իր իսկ բուրքական հասարակության բարենորոգման համար. դրա վկայությունները շատ են, բայց ես կրերեմ բոլորովին անկանխակալ օտար հեղինակության ասածները.

«Թուրքի ժողովուրդներն և ոչ մեկը, որչափ հայը, այնչափ ուրախությամբ շողումնեց ազատական կառավարությունը, զոր երիտասարդ-թուրք կուսակցությունը հօչակեց»: Դայերը... «ամենակին մասնավորությանց (սեպարատիզմի, անջատողականության) գաղափարներ չունին և երեք կամք չունին համերաշխության գործին արգելքներ հարուցանել»: «Կատարյալ աշխարհականացման... ատեն միայն պիտի իյնան բաժանման միջնորմները, որոնք այժմ իրարու դիմաց գտնվող ազգությունները իրարմէ կզատեն... Միայն այդ կերպվ կրոնան զանազան ազգությունները իրարու հետ միանալ, և հաստատուն միավորություն մը կազմել, որ կրոնա ամենուն հասարակ (common - ընդհանուր) երդու հայրենիքը մնջության և բարորության հասցմել»³⁰:

Նույն բանն ասում է և մանրանասն փաստարկում է Առնող Թոյներին հայկական հարցին նվիրված իր մեկ ուրիշ աշխատության մեջ: Ինչպես որ «Armenian Atrocities»-ում, Թոյներին այստեղ ևս ուղղակիորեն հերքում է այն փաստարկը, թե իր հայերի ազգայնական նկատումներն էին, որ համեցեցին 1915-ի որերգությամբ, և ցույց է տալիս արևմտահայության քաղաքակրթական առաքելությունը Օսմանյան Թուրքիայում: «Արդյո՞ք հայության տասնմերորդ դարի զարթոնքը անհուսափելի սպանալիք էր Օսմանյան պետության ինքնիշխանությանը և միասնականությանը: Եվ արդյո՞ք այն աղետաբեր պառակսումը, որ տեղի ունեցավ հայերի և թուրքերի միջև, պարզապես մոլորյալ հայերի համար նկատումների արդյունքն էր, - հարց է տալիս Թոյներին և պատասխանում. - Այդպիս պնդում են թուրքերը, բայց նրանց փաստարկը հօսս է ցնդում, որովհետև ծշմարտությունը հայերի կողմն է»³¹: Թոյների փաստարկն այն է, որ հայերը, որոնք հոծ զանգվածներով բնակվում էին ոչ միայն բուն Արևմտյան Հայաստանում («Վանի նահանգում», ասում է Թոյներին), այլև կայսրության մյուս մասերում, - այդ ամբողջ երկրի լիիրավ ժառանգործներն էին թուրքերին համահավասար, որոնց պատկանում էր քաղաքական իշխանությունը: «...Իրենց տաղանդի և խառնվածքի շնորհիվ հայերն իրենց ծեռքն էին վերցրել Թուրքիայի արյունաբերության, առևտութիւն, ֆինանսների և մտավոր կարողություններ պահանջող աշխատանքների մեջ մասը...»³²: «Թե պատերազմի և թե խաղաղության ժամանակ, թե՛ բանակում և թե՛ խորհրդարանում հայերը ջանքեր էին գործադրում իրենց ընդհանուր հայրենիքը (the Ottoman Commonwealth - «Ազգերի Օսմանյան համագործակցությունը», ասում է Թոյներին Ազգերի Բրիտանական համագործակցության նմանողությամբ) փրկելու համար: ...Այս փաստի հետ դժվար է համատեղել թուրքերի այն

³⁰ Բերտրան Բարենի առաջարանը՝ գրված Ս.Օրմանյանի «Հայոց եկեղեցին» գրքի համար: Տե՛ս Սաղարիս արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911: Սմանահանություն՝ Եր., 1993, էջ 16-17:

³¹ A.J.Toynebee. The Armenian people and the Ottoman government // An Anthology of Historical Writings on the Armenian Massacres of 1915. Beirut, Lebanon: Hamaskain Press, [1985], p. 21.

³² Սույն տեղում, էջ 22:

պնդումը, թե 1914-ին հայերը հանկարծ փոխեցին իրենց քաղաքականությունը և սկսեցին դավեր նյութել Օսմանյան կայսրությունը կրօնանելու համար»³³:

Հայտնի է, որ երիտրուքերը, սկզբում թաքուն ու դափնաբար, իսկ հետո թացեիրաց, վերադարձան ավանդական բուրք ազգայնականությանը՝ նրա ամբողջ զազանային եւրյամբ: Նրանք, իսկ հետո նաև Մուտաֆիա Քեմալը, ամեն ինչ արեցին, որպեսզի ցեղասպանությամբ, խտրականությամբ ու զոտուներով ստեղծեն էքնիկապես միատարր Թուրքիա: Ազատական Թուրքիայի իդեալը եղել էր ու մնաց սին պատրանք: Թուրքիայի դիվանագետները և պաշտոնյաները իհմա էլ եվլորպական դիվանագետների շրջանում գովարանում են քեմալականությունը՝ անթաքույց կերպով մատնացույց անելով ազգային զուման իրողությունը որպես նրա արժանիք³⁴: 2008 թ. նոյեմբերին, Մ.Քեմալի մահվան տարեդարձի առիրով, Բյոյուսելում Թուրքիայի դեսպանության կազմակերպած հանդիսավոր ընդունելության ժամանակ պաշտպանության նախարար Վենչի Գյոնուլը ասաց. «Մի՞քե գոյություն կունենար այսօրվա ազգային թուրքական պետությունը, եթե հույները մնային Էգեյան ծովին հարակից տարածքներում, իսկ հայերը շարունակեին ապրել Թուրքիայի տարածքների մի մասում: Զգիտեմ, ինչ բառեր կարելի է գործածել քնակչության այս փոփոխության կարևորությունը բացատրելու համար (չի ուզում ասել՝ «ցեղասպանություն», «քռնազարդ»). – Հ.Գ.), բայց եթե վերցնենք այն ժամանակվա ազգաբնակչության հարաբերակցությունը, ապա դա ակնհայտ կլինի:»: Դե, իհարկե. Թուրքիայի Հանրապետության տարածքում այն ժամանակ քնակվում էր յոթ միլիոն մարդ, և ստացվում է, որ հայերը կազմում էին քնակչության գրեթե կեսը: Կոտորեցին, բռնազարդեցին, և հարցը փակվե՞ց...

10. Արևմտյան դիվանագետները և նրանց սատարող քաղաքական պատմաբանները հարցը փոխադրում են պատմության՝ պատմական անցյալի բնագավառը, որպեսզի հնարավոր դառնա պատմական Հայաստանը, նրա պատմությունը, հայկական պետական կազմավորումները, հայ մշակույթի հուշարձանները ներկայացնելու նոյն կերպ, ինչպես որ ներկայացվում են բուրքերին, ժուրքիայի պատմությանը և բուրքական մշակույթին նախորդած այլ ժողովուրդների պատմությունը, պետական կազմավորումները, մշակույթի հուշարձանները, որոնց կրողները անցած դարերի ընթացքում լրել են պատմության ասպարեզը (հարեր, խերեր, լիդիացիներ, փոյտգիացիներ, կապարվկիացիներ և ուր.), և ըստ այդմ ինչպես որ ներկայացվում են խերական պետությունը, հելլենիստական պետությունները, հռոմեական պրովինցիաները, Բյուզանդական կայսրությունը: Իսկ ինչո՞ւ բուրք պատմաբանը և նրա համակիր արևմտյան պատմաբանը, պետք է բացառություն անի Ուրարտու (Վաճի թագավորության), Տիգրան Մեծի կայրության, Արշակունյաց, Արծրունյաց, Բագրատունյաց թագավորությունների, Զաքարյանների իշխանապետության, Կիլիկյան Հայաստանի, Արցախի մելիքության, Արքայության պատմությանը:

³³ *Ibid.*, p. 31-32.

³⁴ Եվ ինչո՞ւ շանեն, եթե Է.Գելների նման հեղինակությունը հենց դրա համար «արդարացնում» է թեմպայականությունը, որև «ավանդաբար հավատարիմ է արևմտականացմանը», «Թուրքական Երսպերինեստը» տեսական հետաքրքրություն է Ներկայացնում, ասում է նա՝ արանց նույնիսկ մտարելու հայոց եղենը (E.Gellner. *Encounters with Nationalism*. Oxford, UK և Cambridge, USA: Blackwell Publ., 1994, p. 81-91).

թյունների համար, վերջապես՝ Հայաստանի առաջին հանրապետության համար, որի տարածքն ընդգրկում էր Նախիջևանը, Արցախը, Սուլմալուն ու Կարսը, և այլն:

Բայց Հայաստանը այսօր էլ մնում է իրեն իրողություն՝ պատմամշակութային մի ամրողություն, հայ մշակույթի՝ ճարտարապետության, արվեստի, քաղաքաշինության հուշարձաններով, հայոց հին, միջնադարյան, նոր ու նորագույն պատմության անցքերի, դեմքերի ու նրանց գործերի հետ կապված, հայ հոգևոր մշակույթի մեջ անդրադարձ արտացոլում գտած պատմական վայրերով: Այնպէս որ բացառության մասին չեն խոսքը, այլ այն մասին, որ հայ ժողովուրդը, որպես ազգ ձևավորվելով հնագույն պետական կազմավորումների շրջանակներում, անընդմեջ շարունակել է իր պատմական ընթացքը քաղաքակրթությունների հաջորդափոխության ժամանակաշրջաններում, իր պականական հայրենիքում՝ ընդհույզ մինչև XX դարի սկիզբ՝ մինչև ցեղասպանություն՝ կոտորած և բռնագաղթ:

Եվ հիմա էլ կա. դա աշխարհասփյուռ հայությունն է: Եվ հիմա էլ կա Հայկական հարցը, որովհետև ցեղասպանությունը, ըստ միջազգային իրավունքի նորմների, վաղեմության ժամկետ չունի: Եվրոպական ժողովուրդները, հանձին Եվրոպական պարլամենտի, արդեն ճանաչել են դա: 1987 թ. հունիսի 18-ի բանաձևը ցեղասպանության ճանաչումը չետական է սույն, այլ ավելին է՝ այն պահանջում է Հայկական հարցի քաղաքական լուծում (Resolution sur une solution politique de la question arménienne) և վերաբերում է հայկական Սփյուռքին՝ «Օսմանյան կայության մեջ ցեղասպանությունից փրկված և Հայաստանից բռնազարդված հայությանը» (սա Հայկական հարցի սովորական, ընդունված ձևակերպումն է արևմտյան տեղեկատուններում):

Հուսանք, որ Եվրոպական երկրների դեկավարներն ու դիվանագետները, քարոյական պարտքի գիտակցությամբ, քաղաքական խիզախություն կունենան՝ չորմելու Եվրոպական հանրության արդեն ընդունած օրինական փաստաթղթի պահանջները: Միլիոնավոր աշխարհասփյուռ հայերի աշքերը նրանց են նայում:

Summary

**Armenia and Europe:
The history of Armenia and the Armenian culture in perspective
of contemporary historical and political theories**

Hamlet A. Gevorkian

The contemporary theoretical conceptions of history, politics and culture are based on the analysis and interpretation of the history of Western Europe. When applied to the Armenian history and culture, they must be specified and re-interpreted. In this paper the place and the role of Armenia and Armenian culture are considered in the historical context. The concepts *synchronous* and *diachronous* wholeness of culture are introduced and the *continuity* of the his-

tory of Armenia and of the Armenian culture is affirmed. The Armenian culture has expanded its potentialities in the whole cultural space in every historical epoch, and proved to be able to enter into dialogue with other cultures, to adopt and preserve historical monuments of material, social and intellectual culture. It is obvious the impact of the European culture and socal life on Armenia, the progress of the country in Europeanization, interrupted and suppressed by Genocide - massacres and deportation - of the Armenian population. Since there is not any negative prescription for the crimes against humanities, the European countries are expected to realize the Resolution of the European community Parliament (1987) on “Political solution of the Armenian question” (not mere acknowledgement of the fact of the Genocide).